ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի 42 0231 6-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 փետրվարի 2012թվականի N 5-Ա

ԿԱՐԱՊԵՏ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Կարապետ Խանզադյանին 02 փետրվարի 2012 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 2802022012-04-0004 վկայականը և 2012 թվականի փետրվարի 3-ի դիմումը, *ո ր ո շ ու մ ե մ.*

1. Կարապետ Ազատի Խանզադյանի կողմից, իրեն սեփականության իրավունքով պատկանող 04-094-0104-0025 կադաստրային համարով Փարաքար գյուղի Աճառյան փողոցի թիվ 8 հասցեում գտնվող սեփական հողամասի վրա ինքնակամ կառուցած շինությունները՝ 156.5 քմ բնակելի տունը և պարիսպը 10.7 քմ ընդհանուր մակերեսով ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման վճարը բնակելի տան համար համար- 1 քմ-ը 2600 դրամ է, որը կազմում է 156.5 x 2600 = 406900 (չորս հարյուր վեց հազար ինը հարյուր) դրամ, օժանդակ շինությունների համար 1 քմ-ը 1560, որը կազմում է 10.7 x 1560 = 16692(տասնվեց հազար վեց հարյուր իննսուներկու) դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 423592 դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանումում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

?????? ?????????

20__ թ.____

գ.Փարաքար

Mar 5 2012 3:13 PM